

սուն¹ աստիճանի ջերմութեամբ աճեցը ներով, Օդապարկին գրեթէ հազար վեց հարիւր լարի վերելական նոր ուժ մը տուաւ, որով գունար ութ հազար ոտքէ աւելի բարձրացաւ: Այս ճամբորդութեանը մէջ ամենէն բարձր ելած կէտերնին այս եղաւ, և օդուն բարեխառնութեան աստիճանը այն աստիճանի նուազեցաւ, որ տղքորն և իր ընկերները հարկ եղաւ ծածկոյթնին վրանին առնուն:

Ֆէրկըսըն աճապարեց վար իջնալու. օդապարկին պատեանը ճաթելու չափ կ'ուռէր. սակայն և այնպէս կրցաւ դիտել լեռան հրաբղխային ծագումը, որուն մարած բերաններն ալ խոր անդունդք են: Թուշնոց աղբի մեծ կոյտեր Մանտիֆ լեռան կողերուն կրային ժայռերու երևոյթ կու տային, և այնպէս առատ էր աղբը՝ որ բոլոր Միացեալ թագաւորութեան երկիրները պարարտացնելու բաւական էր:

Ժամը հնգին վիկտորիան, հարաւային հովերէն մէկ դի պատսպարած, հեզիկ հեզիկ լեռան զառիվայրէն շիտակ վար կ'իջնէր, և ծառազուրկ բաց տեղ մը՝ հեռի յամենայն բնակութենէ՝ կանկ կ'առնուր. անմիջապէս որ գետինը դպաւ, ամենայն զգուշութիւն ի կիր առին որ զայն ամուր վար բռնեն. և Բէննըտի հրացանը ձեռքն առած՝ դարովար դաշտին մէջ յարձկեցաւ. քիչ մը ետքը ձեռքը վեց հատ վայրենի բադ բռնած և մէկ կտցարի տեսակ մըն ալ՝ ետ դարձաւ, զորոնք ճոյ կրցածին պէս աղէկ պատրաստելով եփեց: Կերակուրնին շատ ախորժահամ կերան, գիշերն ալ ամենայն հանգստեամբ անցուցին:

Կը շարունակուի:

¹ Հարիւրաստիճանի 100°:

ՅՈՒՅԱԿ

ԳԻՏՈՒԹԵԱՆՅ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՅ ՅԻՏԱԼԻԱ

ՎԵՅԵՐՈՐԴ ԴԱՐԷ ՄԻՆՁԵՒ Ի ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՍ

(Տես էրես 104.)

Յետ խօսելու Պատմութեան և Բանաստեղծութեան վրայ, որովք նշանաւոր եղաւ այս յեղանակս, աւելորդ համարիմք ուրիշ տեսակ դպրութեանց վրայ խօսիլ, թէ և շատ գրուածք կան, ինչպէս են լատինաբանք, քերականք, վիպադրոյցք, բարոյախօսք և իմաստասէրք. որք աւելի գրաւորաբար քան գիտնաբար գրեցին, Արիստոտելէն հետեւալով Պլատոնի մօտենալու համար, իսնագարեալ նմանողութեամբ մը: Մեր հին կենսագիրք՝ ասոնց չափազանց յարգ ընծայած են. մեզի ուրիշ բան չիմնար՝ բայց եթէ զանազանել համեմատական մեծութիւնը դրական մեծութենէն:

Արդեօք թէ դարու՝ իտալական դրպրութիւնն օտարազգեաց դպրութենէն շատ գերազանց էր: — Պէտք է խոստովանիլ, որ հիմակուան օտարաց դրպրութիւնն կը գերազանցէ քան զմերս. և եթէ մենք առաջնութիւն ունինք, չենք կըրնար ըսել թէ և գերազանցութիւն. բայց եթէ ազգային նախանձով կուրնանք և ուրանանք այն զարմացքը՝ զոր արժան է ընծայել մեզմէ չեղածին և մեզի նմանողութեան առիթ եղածին: Եթէ Ալֆիերի և Մանցոնի ալ ազգայնութեան պարտքը ուրիշ կերպ հասկընային, չէին կըրնար ողբերգութիւնը և վիպասանութիւնը աւելցնել իտալական դպրութեան հին գանձուց վրայ:

Այս յեղանակիս մէջ բնական իմաստասիրութիւնն ալ չզարգացաւ յիտալիա. Լեհացին Քոբեռնիք (1473-1543) սեփականեց զայն: Կ'ըսուի թէ իր գիտերն իրմէ առաջ ալ անծանօթ չէին յիտալիա. սակայն ճշմարիտն ըսելու համար, մեր այն ժամանակի աստեղա-

բաշխք՝ շատ աւելի չէին արժեք քան զաստեղահմայս, որք կատարինեայ Մե տիչեայ, և ուրիշ փոքր իշխանաց և պարոնայց քով կը յաճախէին, և իրենց շաղակրատութեամբ լցին զԵւրոպա: Միայն բժշկութիւնն իրական յառաջադիմութիւն մ'ըրաւ: Եւստաքիոս Ռուտիոյ նախ քան զ'1557, Գորումպոյ (1577), Չեզայքիսի (1519—1608), և ուրիշներ, գրեցին արեան շրջադարձութեան վրայ, զոր յետոյ որոշակի ցուցուց և պարզաբանեց Անգղիացին Հարվէյ (1619), և մեծ անուն հանեց. մերոնք այս բանս իրենց զրկանք մը կը սեպեն, այլ մենք չենք ուզեր վիճել: Մեծագոյն գիւտը՝ զանազան իմաստնոց այլեայլ քննութեամբ քիչ քիչ առաջ եկած են. պէտք էր որ ճշմարիտ պատմութիւնն այս գիտնոց երկասիրութիւնները և հնարքները լաւ բացատրէ, որպէս զի մարդուս հանճարն յագեցով՝ կարենար նոր գիւտեր հնարել: Այս ճշմարիտ պատմութեան յաջողելու համար՝ պէտք է թողուլ որ և է անձնական քաղաքային և ազգային կանխակալ մտածմունք, վասն զի ասոնց ընծայած երևելի գիւտաւորքն՝ շատ հեղ խարէական բաներ են: Վէճի տակ ընկած փառքն ոչ երբեք ստոյգ փառք կ'ըլլան. երկու տեսակ խօսք՝ միշտ հակասութիւն կը պատճառեն. միայն բացարձակ փառքն են որ միշտ մեծ և ստոյգ կը մնան: Ստոյգ և անժխտելի փառք են մեր Նաւողաց՝ Գորումպոսի և Վեաքուչեայ:

Ամերիկ վեաքուչի Ֆիորենցացի (1441—1512), յամին 1497 Ամերիկոյ ցամաքը ելաւ, որ է ըսել հինգ տարի յետոյ քան զԳորումպոս. բայց ամենէն առաջ այն երկրին աշխարհացոյց չինելով և տեղեկութիւն պրելով և ծանօթացնելով Գոսկանայի՝ իր անունն յաղթեց Գորումպոսի անունն. բայց այս յաղթութիւնս այնքան անիրաւ երեցաւ Հնդկային արքունի ատեանին, որ յամին 1508 վճռեց նոր երկիրը Գորումպիա անուանել. այլ, ափսոս, որ ուշ էր. Ամերիկի անունն արդէն զօրացեր էր: Ասոր վերջին նաւարկութիւն եղաւ յամի 1512.

յետոյ եկաւ 'ի Լիզպոնա, և հոն մեռաւ լի հարատութեամբ և պատուով. մինչդեռ Գորումպոս զրկեալ իր վսեմական պաշտպաններէն (Ֆերտինանտ և Իզապել Սպանիոյ), կենաց մէկ մասը բանտի մէջ անցուց և մեռաւ թշուառաբար:

Յովհան Գապուդոյ վենետիկցի, իր որդին Սեքստուսին ծնեալ 'ի Պրիսգոլ (1467), Յովհան Վերաձանի Ֆիորենցացի, գտան Հիւսիսային Ամերիկայն. առջիններն Անգղիոյ ծառայութե մէջ, վերջինն՝ Փրանկաց: Ասոնք են յետին խաղացի հռչակաւոր նաւորք. օտարք ժառանգեցին մեր թողածը, և օգտուելով յաջողեցան. և այն երկիրներէն զոր Գորումպոս, Ամերիկ, Գապուդոյ և Վերաձանի քաղաքակրթութեան դարձուցին, և ոչ մէկն մնաց խաղացուց ձեռքը. ոչ գաղթականութիւն և ոչ վաճառականութիւն. նշան անկման խաղացուց ժրութեան՝ որ յանկարծ փոխեցաւ 'ի ծուլութիւն և թուլութիւն, մանաւանդ թէ յանտարբերութիւն: Բաւական չէ ըսելն թէ Ամերիկոյ և Բարիյոսոյ Գլխոյն գիւտն՝ Միջերկրականի վաճառականութիւնը խլեցին յիտալացուց, այլ մանաւանդ պէտք է ըսել թէ իտալիա ծուլացեալ՝ նոր ճամբայ չբացաւ վաճառականութեան:

Այս յեղանակիս մէջ շատ նշանաւոր արուեստաւորք ընծայուեցան. արուեստից մէջ է միշտ իտալացուց գերազանցութիւնն, նաեւ առաջնութիւնն: Այս բանիս համար չեմք կարօտիր ուրիշ աշխարհներ երթալու՝ սովորելու և նմանելու. Ժեզարուն, և մանաւանդ առաջին կիսուն, արուեստն՝ կատարելութե ծայրը հասաւ: Յիշենք հինգ երևելի ճարտարներ, որոց քով հաւաքուեցան մնացեալք. և են Լէոնարտոյ, Միքէլ-Անճելոյ, Ռափայէլ, Դիցիանոյ և Գորրեճիոյ: — Լեոնարտոյ ծնաւ 'ի Վինչի յամի՝ 1459: Երիտասարդութեան ատեն մեծ ջանիւ ետեւէ եղաւ գեղարուեստից, երաժշտութեան, բանաստեղծութեան, նկարչութեան, ճարտարապետութեան, անդրիագործութեան, ու

սումնական և մեքենական գիտութեց, և այլն: Այսպիսի բեղնաւոր և ընդարձակ հանճար կըրնայ մօլորցընել շատերը՝ շատ բանի ետեւ ըլլալու, երբ չեն մշտածեր որ միայն քիչերու տրուած է այս բանս, մանաւանդ ուսմանց զարգացման ատեն: Պէտք է ևս գիտնալ, որ Լէոնարտոյ ալ երբ 35 տարուան եղաւ՝ միայն արուեստից և նկարչութեան կը պարապէր, յորս և գերազանցեց, և ի ծայրն հասաւ ընթերցաց պատկերաւն, զոր նկարեց ի Միլան, 1494 տարիէն մինչև ի 1499: Հոն հաստատեց Լոմպարտեան վարժարանը, որ երկայն տարիներ ժլորենտեան ոճոյն կը հետեւէր: — Լէոնարտոյ մեռաւ յամի 1519: Իրեն հետևողքն և աշակերտք՝ եղան Կելսար Սեպոյ (1529), Լուիսի (1524), Ֆերրարի (1484-1550), Բեռնարտին Լանիսի (1578), Անդրեաս Սալայի, և այլն:

Միքել-Անձելոյ ծնեալ յամի 1474, էր նոյնպէս միանգամայն նկարիչ, անդրիագործ, ճարտարապետ և բանաստեղծ. 15 տարեկան հասակէն սկսաւ անդրիագործութեան աշխատիլ քան նկարչութեան: Օր մը երբ Մեծաբարոյ անուանեալ Լաւրենտ Մետիչի կը պտտէր ի Ս. Մարկոս ըսուած պարտիզի Ֆիորենցայ, ուր կը հաւաքուէին անդրեաց ճարտարագոյն քանդակներն, և որ հիմայ ալ յետ վատիկանի առաջին թանգարանն է, տեսաւ 13 կամ 14 տարեկան տղայ մը՝ որ քերչաւ այժամարդոյ անդրոյ գլուխ մը կը մաքրէր: « Ի՞նչ կ'ընես, հարցուց անոր՝ ծիծաղելով: — Կը տեսնես որ կը զրուադեմ: — Ո՞վ է վարպետդ: — Դոմինիկոս Կիրլանտի: — Բայց նա նկարիչ է և ոչ անդրիագործ: — Այդ գործիքը ո՞վ տուաւ քեզի: — Կրանաչչի: — Հապապդ կճաքարը: — Քարագործք տուին: Ուսկից օրինակեցիր: — Այժմարդին գլխէն: — Բայց անոր գլխին վարի կողմը պակաս էր: — Ես պակասը լեցուցի: — Նայինք: Ի՞նչ է անունդ: — Միքել-Անձելոյ Պուոնարոզզի: — Կը ներես Պա-

րոն, որ դիտողութիւն մ'ընեմ: — Հրամայէ: — Դու ուզեր ես ծեր կերպարանել այս այժմարդը: — Այո: — Այն ատեն պէտք չէր որ ակռաները ամբողջ թողուիր. այն հասակին հարկաւ գոնէ քանի մը հատ կը պակսի: — Իրաւունք ունիք: — Այս զրուցատրութենէն վերջը Լաւրենտ գնաց, տղայն սկսաւ մտածել անոր ըսածը, և մանաւանդ անոր ո՞վ ըլլալը: Երկրորդ օրը գլուխը լոմընցուցած տարաւ առ Լ. Մետիչի, որ հանեց զնա Կիրլանտեայ արուեստանոցէն, իր պալատին մէջ սենեակ մը տուաւ անոր, և իբրեւ իր զաւակն ընդունելով հետը սեղանակից կ'ընէր: Այս դիպուածէն ետեւ Միքել-Անձելոյ գրեթէ բոլորովին թողուց նկարչութիւնը և անդրիագործութեան ու ճարտարապետութեան ետեւ եղաւ:

Տանդէի պէս դիւրագրողու էր բարքով, և արուեստագիտաց Տանդէ կուշուեցաւ: Անգամ մը գժտելով ընդ Յուլիոսի Բ Պապի որ յանձնէր էր իրեն իր շիրիմը շինելու, թողուց զՀռովմ և փախաւ ի Ֆիորենցա, որով պատճառեց երկու տէրութեանց մէջ դժկամակութիւն մը. բայց Ստեփանի քաղաքապետն միջնորդ ըլլալով՝ դարձուց զնա ի Պուոնիա առ Պապն: Սա տեսնելուն պէս զարուեստաւորը, կը յանձնեմ քեզի, ըսաւ, իմ պատկերս շինելու. պղնձէ վիթխարի անդրի մը պիտի ըլլայ, Ս. Պետրոսիոս եկեղեցւոյ մեծ դրանը վերայ դնելու համար. և ահաւասիկ առաջին կարեւոր ծախուց համար 1000 տուգադ: — Ի՞նչ կերպարանքով կ'ուզես որ ներկայացընեմ Սրբութիւնդ: — Օրհնութիւն տալու ձևով: — Շատ լաւ՝ աջ ձեռքին համար. իսկ ձախը ի՞նչ դնենք, արդեօք գիրք մը: — Գիրք մը. ես այնչափ չեմ հասկընար գրքերէ. սուր մը:

Ետ 10 ամսոց անդրին իր պատուանդանին վրայ տեղաւորեւ էր. Յուլիոս Բ եկաւ տեսնելու. և աջ ձեռքը քիչ մը չափէն աւելի ցրցուած գտնելով, Ատիկայ օրհնէնք կու տայ թէ անէծք, հարցուց: — Երկուքն ալ, պատասխանեց Միքել-Անձելոյ. անցելոյն կը ներէ, ա-

աղագոյին կը ուղարկուէր : — Ապրիլ, կան-
չեց Յուլիոս. միտքս իմացողները կը սի-
րեմ » : Սակայն անգործն սպառնալիքն
շատ վախ չի ձգեց . խռովութեամբ ատեն
կործանեցին և կտոր կտոր ըրին. միայն
գլուխն 600 լիպրա կը կշռէր . և 5000
ոսկի տուգադ արժեք էր անգործին :

Օր մ'ալ կանչեց Յուլիոս զՄիքէլ-
Անճելոյ և տարաւ Սեքստեան մատուռը
(ի Ս. Պետրոս) . « Այս տեղս բոլոր նը-
կարներով ծածկելու է, ըսաւ : — Բայց
ես անգործագործ եմ և ոչ նկարիչ : —
Քեզի պէս մարդ մը ամեն բան կ'ըլլայ :
— Սակայն ատիկայ Ռափայէլի գործ է,
և ոչ իմ . իրեն տուր այս տեղս նկարե-
լու, ինծի ալ լեռ մը կտրելու : — Կ'ու-
ղեմ որ ըսածս ընես », ըսաւ Յուլիոս և
գնաց : Միքէլ-Անճելոյ փորձող և մրցող
մարդ մ'էր, անկարելին ալ կարելի ը-
նող . իրաւ, ես Ռափայէլի հետ մրցիլ
չեմ կրնար, ըսաւ, բայց մէկալը տղու
մը պէս պիտի ընկճեմ : Գնաց առ Պապն,
և « պատրաստ եմ, ըսաւ : — Ի՞նչ պիտի
նկարես, հարցուց նա : — Դեռ չեմ որո-
շած : — Ի՞րբ պիտի սկսիս : — Վաղը : —
Ջրախառն նկարեր ես պատի վրայ : —
Ոչ երբեք » : 18 ամիս վերջը մատրան
գողաւոր ձեղունք նկարուած էր բոլոր .
երբոր բացուեցաւ՝ Հռոմ ափշած գլուխ
ծուեց այս ցուցանքին : Ամենասրբոց տօ-
նին, 1544, Պապն հօն պատարագեց :

Կլեմէս Է-ն ատեն անգամ մ'ալ Մի-
քէլ-Անճելոյ թողուց զՀռոմ և եկաւ
իր հայրենիքը, ուր Պապն կ'ուզէր մշտ-
ցընել զՄետիչիս, հասարակապետու-
թիւնը կործանելով : Միքէլ-Անճելոյի
յանձնեցաւ ամրացընել զՖիորենցա,
որ և 11 ամիս գէմ դրաւ Պապին գեր-
մանացի զօրաց պաշտրման :

Այս յեղանակիս Միքէլ-Անճելոյ
միայն ողջ մնաց իրեն հետ ապրող երե-
ւելի անձինքներէն . Պրաւմանդէ, Ռա-
փայէլ և Սան Կալլոյ՝ որու յանձնուած
էր Ս. Պետրոս եկեղեցւոյ շինութիւնն
աւարտել, մեռեր էին . ինքն միայն կան-
գուն մնար ի մէջ իր նախանձորդաց,
պաշտպանաց և թշնամեաց : Սան Կալ-

լոյի մեռնելէն վերջը՝ Ս. Պետրոսի շէնքը
երեսի վրայ մնաց, ոչ որ կը համարձա-
կէր անոր դմբէթին շինութեան ձեռք
զարնել . Միքէլ-Անճելոյ իսկ կը զանգի-
տէր . պէտք եղաւ որ Պապն Պօղոս Գ
գայ աղաչէ իրեն՝ որ վերցընել տայ գետ-
նին այն բեռը : Նա 15 օրուան մէջ նոր
կերպած և մը շինեց եկեղեցւոյն, միայն
25 վահանադրամի ծախքով . իսկ Սան
Կալլոյ չորս տարուան մէջ հնարեր էր իր
ձեռ 30,000 վահանադրամոց ծախքով .
երբ որ տեսաւ Պօղոս Գ այս նոր ձեռ՝
վճռով հաստատեց որ Միքէլ-Անճելոյ
բացարձակ իշխանութիւն ունենայ շի-
նելու այս շէնքը, որոյ համար արդէն
200 միլիոն ծախք եղած էր : Միքէլ-Ան-
ճելոյ 17 տարի անգաղար աշխատեցաւ
այս մեծագործ շինութեան, և կանգնեց
անոր վրայ Պանթէոնի ձևով գմբէթը :

Ծամին 1563 ի 17 փետր. մեռաւ
Միքէլ-Անճելոյ, այս համառօտ կտակը
թողով . « Կ'աւանդեմ զհոգիս առ Աս-
տուած, մարմինս՝ հողոյ, և ստացուած-
քըս մերձաւոր ազգականացս » : Իր 90
ամեայ կենաց շրջանն՝ գեղարուեստից
ոսկեղէն յեղանակն է :

Միքէլ-Անճելոյի ընկերքն և աշա-
կերտք փլորենտեան վարժարանին՝ են,
Ղուկաս Սինիօրելլի (1440-1524),
Յրա Պարքուրմէոյ (եղ. Բարդուղիմէոս
1469-1517), Բերուցցի (1484-1536),
Կիրլանտեզի (1485-1560), Անդրէաս
տեյ Սարդոյ (1488-1530), Ռուսոյ
(1544), Բոնդուրոյ (1493-1558),
Պրոնձինոյ (1502-1570), Վազարի
(1512-1574), և այլն : Փլորենտեան
դպրոցէն ծագած կըրնայ ըսուիլ Պօլ-
նիոյ դպրոցն ալ որոյ հեղինակն Յրաւե-
լիս՝ Միքէլ-Անճելոյի արժանաւոր ըն-
կերաց մէկն եղաւ :

Անոր երկար կենաց ատեն երեցաւ և
Ռափայէլ Ուրպինացի, այնքան կարճ
կենօր (1483-1520) որ մէկալին չուք
մը կըրնայ ըսուիլ : Ոչ բազմահմուտ մը
կամ գրողէտ մը ըլլալով և ոչ ալ ա-
նուանի ճարտար մը երկու քոյր արուեա-
տից՝ նկարչութեան և ճարտարպետու-

թեան, (թէ և այս ետքինիս մէջ ալ բաւական գեղեցիկ օրինակներ ընծայեր է), աւելի յատուկ և միայն նկարիչ մ'է. և գերագոյն քան զայլս 'ի հնարման և 'ի բացատրութեան, 'ի վայելչութեան, և յատուածայնութեան ընտրեալ նիւթոյն, մանաւանդ Տիրամօր պատկերաց: ՅԱրարիւնոյ իր հօրը քով, որ ոչ աննշան նկարիչ մ'էր, սկսաւ սովորիլ արուեստը. յետոյ 'ի Բերուհիա Պետրոսի Բերուհիացոյ առաջնորդութեամբ, որ արդէն անուանի էր և աւելի անուանի եղաւ իր աշկերտովը: Ի փոքրենտիա սկսաւ երևելի ըլլալ, իսկ 'ի Հռոմ գերազանցեց քան զամեն ժամանակակիցները, նաև քան զՄիքէլ-Անճելոյ. և թէ կարելի է ըսել՝ ինքն զինքն ալ, միշտ յառաջագիմութեամբ հանճարոյ, ինչպէս որ կ'երևի իր գործոց մէջ՝ թէ 'ի վատիկան, թէ անոր Պատըշգամաց մէջ, թէ 'ի Ֆառնէզեան պալատան, և 'ի պատկերս Ս. Բնտանեաց, 'ի կենդանագիր պատկերան, յԱլլակերպութեան, և յանթիւ ուրուագիծս, զոր առատապէս կու տար իր նախանձորդ նկարչաց, փորագծողաց և քանդակողաց: Կը սիրէր զարուեստս և զարուեստաւորս, և իրեն մօտեցողաց ձեռնտու կ'ըլլար. ամենևին չբարկացաւ մէկու մ'ալ, և ոչ ալ նախանձեցաւ կամ արհամարհեց մէկը. թէպէտ և ինքն ալ շատ արգելք կամ դժարութիւն չիկրեց: Առանց մեծերու պաշտպանութե բաղձալու՝ ամենքն ալ զինքը կ'ուզէին, պապը և իշխանազունը և գրագէտը, և ամենայն զլիաւոր անձինք ժամանակին: 37 տարուան մեռաւ այս անմահ յիշատակաց և փառաց անձն: Լեոն Ժ պապն և բոլոր Հռովմայ քաղաքացիք գացին իր յուղարկաւորութեանը. ուրուն առջևէն՝ գեղեցիկ մտածութեամբ՝ կը տանէին իր սքանչելի Ալլակերպութեան պատկերը:

Իր աշկերտներն որ Հռովմայական դպրոցը կը կազմեն են, Յուլիոս Հռոմալեցի (1492-1546), Բեննի կամ Ֆադիպի (1483-1528) որ գերազանցեց քան զայլս, Յովհան Ուոթինցի

(1494-1564), Բուխտորոյ տէ Գարաշաճիոյ (1546), Բերին տեյ վակա (1547), Դանիէլ Վորադերայ (1509-1567), Թագէոս Ծուզգարի (1566), և ուրիշ շատեր. որք յետ աւարառութե Հռովմայ 'ի Պուրպոնաց (1527) ցրուելով յիտալիա, 'ի Սպանիա և 'ի Փռանկաստան՝ ծաւալեցին իրենց դպրոցին ոճը:

Թերևս միայն վենետիկեան դպրոցն է որ ուղղակի իջնելով Յունական դպրոցէն՝ փրօնտեանէն չէ ծագած. սակայն իր զարգացումն զանդադ եղաւ, և հռչակն ալ սկսաւ Յովհ. Պելլիկի (1426-1516) և Մաւրիկիոս (1430-1506) նկարչք, որոց յաջորդեցին Ճիոյրձիոնէ (1477-1511) և Դիցիսանոյ (1477-1576). այս ետքինս իր երկար (99 ամեայ) կենաց միջոց շատ զարգացուց վենետիկեան դպրոցը. և իր նկարուց գունագեղութեանն համար արժանաւոր համբաւ ստացաւ: (Հոս պէտք է ծանուցանեմք ոմանց անպատշաճ նմանասիրութիւնը օտար դպրոցաց, մանաւանդ Ֆլամանտին. յիրաւի սքանչելի են այս դպրոցիս նկարու մէջ հիւսիսաբնակ մարդկան գեղեցիկ գունաւորութիւնը, այլ այս ոճս չի յարմարիր հարաւայնոց կարմրագոյն և նկարատիպ գունոյն. մեզի կ'երևի թէ եթէ իտալիայէն դուրս նմանողութիւն փրնտեւէ հարկ ըլլայ՝ պէտք է երթալ 'ի Սպանիա և յԱնգղիա՝ քան 'ի Ֆիանտրա): — Դիցիանոյ զուարթ և քաղցրաբարոյ էր, և երջանիկ եղաւ թէ իր հայրենեաց մէջ, թէ յարքունիս Կարուսի Ե' և Ֆրանսուայ Ա:

Քիչ մը ստորեւ են քան զնա Դիմիորեոյ (1512-1594), Պօղոս վերոնացի (1528-1588). ասոնցմէ ետեւ Պասսանոյ (1510-1592), Բալմա երէցն (1518-1574), և այլք: Անտ. Ալլէկրի կամ Գորրեձիոյ՝ յանուն իր ծննդեան քաղաքին՝ որոյ մօտերը միշտ աշխատեցաւ, 'ի Բարմա, Մոսկնա և Պոլոնիա. սա ինքն իրեն աշխատելով և գրեթէ առանց օրինակի, ստացաւ յատուկ ոճ

մը ընտրական, ինչպէս որ իրմէ 50 տարի վերջ ալ և նոյն կողմերը՝ ըրաւ Գարաշէի: Կ'ըսուի թէ օր մը Գորրեճճիոյ տեսնելով Ռափայէլի պատկերները՝ կանչած ըլլայ. « Ես ալ պատկերահան եմ » . այս ձայնարկութիւնս սխալ մամբ ուրիշ շատերուն ալ կ'ընծայուի: — Գորրեճճիոյի մօտերը ծնաւ և Բարմիսիանոյ, և մեծ համբաւ հանեց: Ասոնց աշկերտներն և հետեողք յետոյ Պոլսնիոյ դպրոցին զուգեցան:

Այս յեղանակիս ճարտարպետութիւն և քանդակագործութիւն ալ ծաղկեցան: Զատ 'ի Միքէլ-Անճելոյէ և Ռափայէլէ՝ նշանաւոր եղան Գրոնագա (1509), Պրաւանդէ (1514), Յուշիան և երկու Անտոնք Սան Կալոյ (1517-1546), Սան Միքէլի (1484-1559), Տէ Մարգի (1490-1574), Դարդալիս (1500-1554), Վիկտորա (1507-1573), Բալիոդոյ (1521-1591), Սանտովինոյ և Բալլատիոյ (1500-1580), Քանդակագործաց մէջ անուանի են ևս Պալլիոյ Պանտինելլի (1490-1559), Դրիպոյ (1500-1550), Պենվենետոյ Զելլինի (1500-1570), որ կ'անուանի ամենայն ոսկերչաց թագաւոր: Այս զարմանալի յեղանակիս մէջ զարգացան նաև պողպատի և փայտի վրայ փորագծութիւնք. և անուանի ճարտարք եղան զատ 'ի Մանդէնայ, Փրանչիա Բարմիճիանինոյ և Դիցիանոյ, նաև Մարկ-Անտ. Բախմունտի, (1488-1546), որ կը փորագծէր Ռափայէլի և Վենետիկցի Օգոստինոսի հնարածները:

Յետ այս գեղարուեստից արժան է յիշել հոս և երաժշտութիւնը, որ ծնաւ և զարգացաւ գրեթէ միայն յիտալիա, և միշտ իրեն սեփական մնաց: Ասոր հաւաստիք մ'է Կուիտոյ տ'Արեցցոյ ԺԱ դարու մէջ. յետ նորա ուրիշներ ալ երեցան ԺԳ և ԺԴ դարուց մէջ. բաւական է յիշել այն ատենի բանաստեղծական շարադրութեանց անունները, Պարերգ (Ballade), Յոջք (Chanson), Նոշազ (Sonnet), և այլն, համոզուելու համար թէ ասոնք երգուելու համար

էին. Տանդէ և Պոգգաչիոյ շատ հեղկը յիշեն զերաժշտութիւն 'ի ԺԴ դարու. և զիտեմք որ Փրանկ. Լանտիլնոյ մականուանեալն Կոյր, պսակ ընդունեցաւ 'ի վենետիկ յամի 1341, գրեթէ Բեդարգայի հետ: Բայց անկէ ետև և ԺԵ դարուն մէջ կարգէ դուրս բան մը հանդիպեցաւ երաժշտութեան: Իտալական քաղցր, ճոխ և ներդաշնակաւոր երաժշտութիւնն (ըստ իտալական հանճարոյ), իր ծագման ատենէն ընկճեցաւ և ԺԵ դարու մէջ գերմանականին ազդեցութիւնը առաւ, որ աւելի ուսումնական է. 'ի Հոմ, 'ի Նաբոլի, յեկեղեցիս և յարքունիս՝ միայն գերմանական երաժշտութիւն կ'ընէին. և մէկ հատիկ յիշեալ իտալացի երգահան Ժամանակին է Ֆրանգիլոյ Կաֆորիոյ (1451-1520), որ համարուի նորոգող իտալական երաժշտութեան, թէպէտև ինքն ալ ուսումնական երաժշտութիւն հնարեց՝ Յոյն և Լատին հեղինակներէ լոյս առնելով: Ճշմարիտ և ներշնչեալ արուեստաւոր մ'է Բալետտիստա (1529-1594). յետ որոյ՝ իտալական երաժշտութեան մնաց առաջնութիւնն: Առաջին Աղօթարանք հնարուեցան Ս. Փիլիպպոս Ներեայ ընկերութեանը համար (1515-1596). այս միջոցիս երեցաւ նաև առաջին թատերերգութիւն Զինցիոյ ճիրալտեսայ, տպագրեալ 'ի Ֆերրարա, 1541: Միով բանիւ ամենայն հնարք և զարգացմանք և գլխաւոր ոճք այս աստուածային արուեստիս՝ իտալական են: Բայց աննշան փառք մ'էր սա՝ եթէ միայնացեալ մնար. այլ վսեմ և կենդանատիպ է, որովհետև երեցաւ 'ի ԺԶ դարու, 'ի պայծառութեան արուեստից և դպրութեանց. իր կողմէն ալ ցուցնելով այս ամեն բարգաւաճանաց եղբայրակցութիւնը՝ իրարու տուած օգնութեամբք և ազդեցութեամբք:

Կը շարունակուի: